

Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց>>

ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Հարցադրումների մեթոդի կիրառումը
աշակերտների ներգրավվածությունը մեծացնելու նպատակով*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ*

ՈւՍՈՒՑԻՉ՝ *Սեդրակ Եղիազարյան*

ԴՊՐՈՑ՝ *<<Ն. ԳԵՏԱՇԵՆԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ>>*

Մարտունի -2022

Բովանդակություն

1.Ներածություն.....	3
2.Գրական ակնարկ	6
3.Փորձարարական հետազոտություն.....	11
3.1.Խմբի նկարագիր.....	11
3.2.Փորձարարական դասեր.....	11
3.2.1.Փորձարարական դաս-1.....	11
3.3.2.Փորձարարական դաս-2.....	12
4.Վերլուծություն.....	14
5.Գրականության ցանկ.....	15
6.Հավելված.....	16
1.Դասապլան-1.....	16
2.Դասապլան-2.....	20

1. Ներածություն

Տեխնոլոգիա առարկան սովորողներին զինում է անհրաժեշտ տեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, առանց որոնց անհնար է երկրի լիարժեք սոցիալ-տնտեսական առաջընթացը, անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը:

Տեխնոլոգիական հմտությունների զարգացումը շատ կարևոր տեղ է զբաղեցնում կրտսեր դպրոցում: Տեխնոլոգիա առարկան իրենից ներկայացնում է մի ամբողջականություն, որը չի սահմանափակում մտքի ազատությունը, զարգացնում է մտածելակերպը և օգնում ստեղծագործել:

Կրթել աշակերտին տեխնոլոգիապես նշանակում է ձևավորել հասարակության ու պետության շահերին նպաստող, անհրաժեշտ գիտելիքներով, ունակություններով և հմտություններով, աշխատասեր, ժամանակակից տեխնիկա-տեխնոլոգիական առաջընթացին ծանոթ, մասնագիտորեն ինքնակողմնորոշված անձ:

Տեխնոլոգիա առարկան նպաստում սովորողի ստեղծագործական և հետազոտական հմտությունների զարգացմանը: Քանի որ տեխնոլոգիան իր մեջ ներառում է խեցեգործություն, նկարչություն, քանդակագործություն, դիզայն, այդ իսկ պատճառով սովորողի համար առարկան հետաքրքիր է դառնում, որը սովորողին հնարավորություն է տալիս դասի ընթացքում ներկայանալ որպես անհատ: Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որն ուղղված է մարդու գործունեության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործունեության նկարագրման և վերլուծման, իրականացման և օպտիմալացման, այդ գործունեության արդյունքների, զարգացման և միջոցների ձեռքբերման և կիրառման ուսումնասիրմանը:

Տեխնոլոգիան դպրոցում ինտեգրացնող կրթական ոլորտ է, որը համադրում է գիտելիքներ մաթեմատիկայից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից և այլ հանրակրթական առարկաներից, ցույց է տալիս դրանց օգտագործումը արդյունաբերության, էներգետիկայի, կապի, գյուղատնտեսության, տրանսպորտի և մարդու այլ գործունեություններում:

Հիմնական դպրոցում տեխնոլոգիա առարկայի ուսուցման նպատակներից է.

- ստեղծագործական և գեղագիտական զարգացումը, մասնավորապես՝ նախագծերի կատարման և նյութերի գեղարվեստական մշակման ընթացքում,
- ընդհանուր աշխատանքային և կենսապես անհրաժեշտ հմտությունների և ունակությունների տիրապետումը, այդ թվում՝ աշխատանքի կուլտուրա, ոչ կոնֆլիկտային շփում, որն անհրաժեշտ է խմբային աշխատանքի պայմաններում և ընտանիքում,
 - ինքնաճանաչման հնարավորության ապահովումը, մասնագիտությունների ուսում- նասիրումը, տարրական մասնագիտական փորձի ձեռքբերումը՝ հիմնված մասնագիտական կողմնորոշման վրա

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է՝

- ձևավորել նոր սոցիալ-տնտեսական իրավիճակներում ստեղծագործաբար մտածող, ակտիվ գործող և արագ կողմնորոշվող անհատներ, որոնք կկարողանան որոշել արտադրանքի պահանջարկը, քանակը և իրացման ուղիները:
 - ձևավորել գիտելիքներ և հմտություններ միջոցների, նյութերի, էներգիայի և տեղեկատվության նպատակային օգտագործման համար,
 - ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում որակական և ստեղծագործական մոտեցում,
 - անհատի բազմակողմանի որակների զարգացում և փոփոխվող սոցիալ-տնտեսական պայմաններում մասնագիտական հարմարվողունակության ձևավորում:

«Տեխնոլոգիա» առարկայի խնդիրներն են.

- Տեխնոլոգիական և աշխատանքային կուլտուրայի ձևավորում, աշխատասիրության դաստիարակում:
- Տեխնոլոգիական գիտելիքների, գործնական և անվտանգ աշխատանքի ունակությունների ձևավորում:
- Գրաֆիկական ունակությունների և կուլտուրայի ձևավորում:
- Նախագծային, կոնստրուկտորական և դեկորատիվ-կիրառական գործունեության ձևավորում:
- Մասնագիտական կողմնորոշման ունակությունների ձևավորում:

Հարցադրումների մեթոդի կիրառման նպատակներից է ուշադրության

կենտրոնում պահել այն աշակերտներին, որոնք հետ են մնում կրթական ծրագրերից, չունեն հետաքրքրություն առարկայի նկատմամբ և չեն մասնակացում գործնական աշխատանքներին:

Վերջինս պատճառ հանդիսացավ, որ ես իմ դասաժամերին նման աշակերտների նկատմամբ կիրառեմ անվանական հարցադրումներ՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը տեսական և գործնական դասաժամերին:

2. Գրական ակնարկ

Ուսուցման ընթացքում տարբեր մեթոդներ կիրառելիս օգտագործվում են հարցեր և հարցադրումներ, որոնք նպատակ ունեն պարզելու սովորողների գիտելիքների ընդհանուր մակարդակը, ապահովելու մտքերի ու գաղափարների ընկալումը, խթանելու նրանց ակտիվությունն ու ներգրավվածությունը ուսուցման գործընթացում:

Հարցերը կամ հարցադրումները աշակերտների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են:

Ուսուցման ընթացքում կարևոր է ոչմիայն ճիշտ հարց տալը, այլև դրանց տրամաբանական հերթականության ապահովումը, որ բացակայությունը կարող է աշակերտին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից:

Հարցերը պետք է լինեն.

- Հստակ
- Հակիրճ
- Նպատակաուղղված
- Տեղին
- Աշակերտների մակարդակին համապատասխան
- Տրամաբանական հաջորդականությամբ
- Մտածելու տեղիք տվող (Մ. Պետրոսյան <<Հարցեր կամ հարցադրումների մեթոդ>>)

Ուսումնական արդյունավետության և սովորողների ներգրավվածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ: Հարցադրումների միջոցով կարելի է ստուգել ոչ միայն նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածությանը աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ճիշտ տրված հարցերը խրախուսում են ստեղծագործական և քննադատական

մտածելակերպի զարգացմանը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների
ինքնավստահությունը (Ասյա Ղուկասյան <<հարցադրման մեթոդները և ուսուցման
արյունավետության բարձրացումը>

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ.

- Բաց
- Փակ
- Հուշող
- Ենթատեքստով
- Հետադար
- ուղղորդող

Բաց հարցեր.

Բաց հարցերը նպատակահարմար են անմիջական հաղորդակցություն սկսելու համար: Այս տիպի հարցերը հնարավորություն են տալիս ազատ պատասխանելու և սովորաբար սկսվում են "ի՞նչ", "ինչպե՞ս" հարցերով: Այդպիսի հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան:

Փակ հարցեր.

Փակ անվանում են այն հարցերը, որոնք պահանջում են միանշանակ պատասխան, որն արտահայտվում է մեկ բառով՝ պարզապես "այո" կամ "ոչ": Փակ հարցերը նպատակահարմար է օգտագործել տեղեկատվության ստուգման կամ պատասխանի ընտրության հնարավորությունը սահմանափակելու համար:

Այս տեսակի հարցերը խորհուրդ չի տրվում հաճախ օգտագործել, որովհետև վերջիններս սահմանափակում են սովորողների մասնակցության աստիճանը և հարցաքննության բնույթ ունեն: Դրանք նաև որոշ չափով սահմանափակում են սովորողների ստեղծագործական մոտեցումը:

Հուշող հարցեր.

Հուշող հարցերը, ինչպես երևում է անվանումից, այն հարցերն են, որոնք նպատակ ունեն աշակերտին հանգեցնելու այն պատասխանին, որն ակնկալում է ուսուցիչը: Այս հարցերի օգտագործումը կարող է նաև արդարացված չլինել, քանի որ խանգարում են աշակերտի ազատ մտածողությանը և զրկում են սեփական պատասխանն ու կարծիքը ունենալու հնարավորությունից, սակայն այս դեպքում աշակերտը ավելի պաշտպանված է իրեն զգում: Հուշող հարցերի օրինակներ են " Դուք չե՞ք գտնում, որ այս թեման կարող է ձեզ համար օգտակար լինել", "Մի՞թե դուք կարծում եք, որ այս մոտեցումը ճիշտ չէ"

Ենթատեքստով հարցեր.

Այս տեսակի հարցերն օգտագործվում են աշակերտների լարվածությունը թուլացնելու և ակնկալվող պատասխանին հասնելու նպատակով, չնայած ինչպես հուշող հարցերը, ենթատեքստ ունեցող հարցերը ևս խոչընդոտում են աշակերտների ազատ պատասխանելու հնարավորությանը: Այդպիսի հարցերից են օրինակ՝ դուք համաձայն ե՞ք, որ Y-ը ավելի լավն է քան X-ը, կամ դուք հավանաբար կսխալվեք, եթե ընտրեք Z տարբերակը:

Հետադարձ կապ ապահովող հարցեր.

Հետադարձ հարցերն օգտագործվում են, որպեսզի ճշտվի նյութի ընկալումը, և աշակերտների գրույցի մեջ ընդգրկված լինելը, նրանց պատասխանները զարգացնելու, կամ հետագա քննարկումը խրախուսելու և շարունակելու համար: Օրինակ՝ "Դուք ասացիք, որ առանց լրացուցիչ ներդրման հնարավոր չէ՞ այս խնդիրը լուծել" :

Ուղղորդող հարցեր.

Ուղղորդող հարցերն օգնում են աշակերտներին կենտրոնանալու միջոցով ուշադրությունը սևեռել դիտարկվող նյութի այս կամ այն մասի վրա: Մասնավորապես այն նպատակահարմար է օգտագործել նոր թեմային անցնելուց առաջ անցած նյութը ամփոփելու համար: Կարևոր է նաև, թե աշակերտներին ուղղորդելու նպատակով հարցերը երբ և որ պահին են տրվում: Տարբեր պահերին ուղղորդող հարցերն օգտագործվում են տարբեր նպատակներով: Մասնավորապես ուղղորդող կարող է լինել հետևյալ հարցը՝ Այսպես, ին՞չ նոր հասկացությունների հանդիպեցինք այս թեման ուսումնասիրելիս" (Մ. Պետրոսյան <<Հարցեր կամ հարցադրումների մեթոդ>>):

Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում: Այդ իսկ պատճառով ցածր և միջին կարողության տեր աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար պետք է անվանակոչվի աշակերտի հստակ անունը, որ պետք է պատասխանի հարցին այն հնչեցնելուց հետո: Մա այն եզակի ռազմավարություններից է, որի կիրառությունն ապահովում է գրեթե բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ դասին մասնակցում են գրեթե բոլոր աշակերտները՝ անկախ իրենց առաջադիմությունից:

Յուրաքանչյուրը մասնակցում է իր չափով, և այս պարագայում խրախուսվում է ցանկացած գործողություն և նպաստում ուսուցման արյունավետության բարձրացմանը:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի 2-րդ միջնակարգ դպրոցի 5-րդ <<Ա>> դասարանում:

Այս դասարանում սովորում են 13 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Տեխնոլոգիան անցնում են շաբաթական 2 ժամ:

Տեխնոլոգիա առարկայի դասաժամերին դասարանը բաժանվում է 2 խմբի՝ աղջիկների և տղաների: Ես դասավանդում եմ միայն տղաների խմբի, որը իր հերթին գործնական աշխատանքի ժամանակ էլի բաժանում եմ խմբերի: Դպրոցում ունենք տեխնոլոգիա առարկայի համար նախատեսված հատուկ մեծ և ընդարձակ դասասենյակ, որը հագեցած է բոլոր տեսակի աշխատանքային գործիքներով, ծառայում է որպես արհեստանոց: Երեխաները միշտ սիրով և հաճույքով են մասնակցում գործնական աշխատանքներին, սակայն նույնը չեմ կարող ասել տեսական դասաժամերի մասին: Այդ իսկ պատճառով ես որոշեցի իմ հետազոտական աշխատանքը իրականացնել հարցադրումների մեթոդով՝ ապահովելով ինչպես չներգրավվող, այնպես էլ մնացած աշակերտների մասնակցությունը ամբողջ դասաժամին:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը վերաբերում էր <<Երկրաչափական կառուցումներ>> թեմային (տե՛ս դասապլան-1 էջ՝ 16): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները, տրվեց բանավոր հետադարձ կապ:

Նոր թեման սկսվեց մտազրոհով: Գրատախտակին գրվեց <<Շրջանագիծ>> բառը և աշակերտները կազմակերպեցին . քննարկում այս բառի վերաբերյալ: Դասարանում եղած 13 տղաններն էլ մասնակցեցին հարցմանը և կատարեցին նշումներ իրենց տետրերում: Նոր թեման ամբողջովին հաղորդվեց հարցադրումների մեթոդով, որին բոլոր աշակերտները մասնակցեցին սիրով, քանի որ թեման մատչելի էր և ծանոթ էր իրենց երկրաչափություն առարկայից: Որոշ հարցերին աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ, այնուհետև գրատախտակը բաժանվեց 4 մասի: Աշակերտները գծում են շրջանագծեր և այն բաժանում տարբեր հավասար մասերի՝ 3,6,4 և 8 մասերի

Աշակերտներից առաջինը գծում է ուղղագիծ զուգահեռ գծեր, 2-րդը՝ գծում է թեք զուգահեռ գծեր, 3-րդը՝ հորիզոնական զուգահեռ գծեր՝ քանոնի, անկյունակի և մատիտի օգնությամբ, իսկ մյուս աշակերտը՝ հատվածը բաժանում է հավասար մասերի՝ քանոնից, գծագրական կարկինից և մատիտից օգտվելով: Այսպիսով բոլորը ակտիվորեն մասնակցեցին դասապրոցեսին:

Այնուհետև դասը ամփոփվեց դարձյալ հարցադրումների միջոցով: Հարցերին հիմնականում պատասխանում էին անվանակոչվածները, եթե չէին կարողանում կամ պատասխանը թերի էր լինում լրացնում էին մյուս ընկերները: Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղորդումներ, նաև բանավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում մնացել էին հիմնականում չներգրավվող աշակերտները, քանի որ նրանք հետ են մնում ուսումնական ծրագրերից: Դասը ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով: Հանձնարարվեց գծել գծագրական թղթի վրա, եթե գծագրական թուղթը շրջանակ և հիմնական մակագրություն չունի պետք է անպայման գծեք, լրացնեք, նոր կատարել տնայինը: Այն է.

Շրջանագծի բաժանումը հավասար (3,4,6,8), հատվածի բաժանումը 2 հավասար մասի և զուգահեռ ուղիղներ (ուղղաձիգ, հորիզոնական և թեք): Այսօրվա իմ վարած դասից գոհ էի ինչպես էս, այնպես էլ իմ աշակերտները:

3.3.Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր << Ուսումնասիրտադրական գործընթացի կազմակերպումը>> (տե՛ս դասալլան-2 էջ՝ 21): Թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, կազմակերպվեց անհասկանալի հատվածների քննարկում:

Աշակերտները նշեցին, որ նախոր դասի ոճը դասի ոճը իրենց դուր շատ եկավ, քանի որ այսպիսի դասերը ավելի արդյունավետ են, քանի որ ստանում են ինչպես նոր գիտելիք, այնպես էլ ամբողջ դասարանն է մասնակցում դասապրոցեսին՝ ապահովելով ամբողջ դասարանի ներգրավվածությունը:

Նոր թեման սկսվեց մտազրոհով: Գրատախտակին գրվեց <<Փայտանյութի օգտագործում>> արտահայտությունը և աշակերտները կազմակերպեցին քննարկում այս բառի վերաբերյալ: Դասարանում եղած 13 տղաններն էլ մասնակցեցին հարցմանը և կատարեցին նշումներ իրենց տետրերում: Նոր թեման ամբողջովին հաղորդվեց հարցադրումների մեթոդով (տես դասալլան-2, էջ՝ 21), ինչը ևս հնարավորություն տվեց ինձ ներգրավվել բոլոր աշակերտներին դասապրոցեսի մեջ: Թեման ամրապնդելու, ինչպես նաև ամփոփելու նպատակով աշակերտներին բաժանեցի զույգերի՝ կազմելով 6+1 զույգ: Յուրաքանչյուր զույգին առաջադրվեց գրել 2-ական հարց թեմայի վերաբերյալ և իրենց իսկ ցանկությամբ ընտրել պատասխանող զույգին: Այս անգամ աշակերտները կազմակերպեցին քննարկում, վերլուծեցին հարցերը՝ ստեղծելով <<հավելյալ>> գիտելիքների շտեմարան: Թեման ամփոփելու համար յուրաքանչյուր աշակերտ կազմեց մեկ նախադասություն կամ ասեց մեկ արտահայտություն թեմայի վերաբերյալ: Դասը ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով:

4. Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 դաս: 2 դասերն էլ սկզբից մինչև վերջ կազմակերպվեց հարցադրումների, ինչպես նաև գույգային և անհատական աշխատանքների մեթոդներով: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում չներգրավվող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույն աշխատելու հմտություն: Աշակերտները խոստովանեցին, որ հարցադրումների մեթոդը շատ արդյունավետ է, որը դասապրոցեսը դարձնում է էլ ավելի հաճելի:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, ես եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. հարցադրումների մեթոդով, որի ժամանակ հնչեցվում են բաց, փակ, ինչպես նաև մարտահրավերային հարցեր

2. ձևավորող գնահատումը

3. բանավոր առաջ մղող հետադարձ կապը

4. գույգային և անհատական աշխատանքները

5.Գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. „Մանկավարժություն,, Մանկավարժ
2005

2.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր` <<Տեխնոլոգիա>>
2007

3.<file:///C:/Users/Mega/Downloads/%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4.pdf>

Ասյա Ղուկասյան <<հարցադրման մեթոդները և ուսուցման արյունավետության
բարձրացումը>>

4.<file:///C:/Users/Mega/Downloads/%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4.pdf>

Մարիամ Պետրոսյան <<Հարցեր կամ հարցարումների մեթոդ>>

6. ՀԱՎԵԼՎԱԾ

Դասապլան-1

Ուսուցիչ՝ ՍԵՂԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Առարկա՝	տեխնոլոգիա	Ամսաթիվ	17.09.2022	Կիսամյակ	I	Դասարան	V
Թեմա՝	Երկրաչափական կառուցումներ						
Օգտագործվող նյութեր՝	<i>Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, կարկին, չափակարկին, քանոն, անկյունակներ, զծագրական թուղթ, մատիտ, ռետին</i>						
Դասի նպատակը՝	<p>Իմանալ-զծագրի դերը արդի ծամանակներում</p> <p>Զարգացնել-տարածական պատկերացումներ և ճանաչողական հմտություններ</p> <p>Իմանալ-զծագրական գործիքների, նյութերի և պիտույքների անհրաժեշտություն</p> <p>Թվել-զծագրական գործիքների տեսակները</p> <p>Իմանալ-զծագրական գործիքների անունները</p> <p>Իմանալ-զծագրի ձևաչափերը և հիմնական մակագրությունը</p>						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						

Վերջնարդյունքները	<p>Աշակերտները կկարողանան.</p> <p>Կառուցել-գծագրական հորիզոնական, ուղղաձիգ, թեք հատվածներ</p> <p>Գծել-տարբեր չափերի շրջանագծեր, զուգահեռ և փոխուղղահայաց ուղիների կառուցում</p> <p>Գաղափար ունենալ-մասշտաբների մասին</p> <p>Բաժանել-շրջանագիծը հավասար մասերի</p> <p>Բաժանել-հատվածը հավասար մասերի</p> <p>Կիրառել-ձեռք բերած գիտելիքները աշխատանքը կատարելիս</p>			
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:	Ողջունել դասարանին, ն/բ:		
5րոպե	Ներկայացնել տնային աշխատանքները	Մտուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը		Մտազրոհ մեթոդ
	Տարբեր աշակերտներ հնչեցնում են տարբեր մտքեր շրջանագիտ տերմինի վերաբերյալ, որը գրատախտակին գրվում է և	Կազմակերպել մտքերի տարափ „Շրջանագիծ,, բառով		

<p>20րուպե- րնթացք</p>	<p>ստեղծվում է հավելյալ գիտելիք</p> <p>Պատասխանել հարցերին</p> <p>Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են չներգրավվող աշակերտները՝ ստեղծելով „հավելյալ,, արժեքներ</p> <p>4 չներգրավվող աշակերտ գծում են շրջանագծեր և այն բաժանում տարբեր հավասար մասերի՝ 3,6,4 և 8 մասերի</p> <p>Հաջորդ 4 աշակերտից առաջինը գծում է ուղղագիծ զուգահեռ գծեր, 2-րդը՝ գծում է թեք զուգահեռ գծեր, 3-րդ՝ հորիզոնական զուգահեռ գծեր՝ քանոնի, անկյունակի և մատիտի օգնությամբ, իսկ 4- րդ աշակերտը՝ հատվածը բաժանում</p>	<p>Նոր թեմայի հաղորդում՝ բաց և փակ հարցերի միջոցով՝ ապահովվելով բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին</p> <p>Տալ ուղղորդող հարցադրումներ</p> <p>Տրամադրել բանվոր հետադարձ կապ ըստ անհրաժեշտության, տրամադրել ձևավորող գնահատում</p> <p>Գրատախտակը բաժանել 4 մասի և 4 տարբեր աշակերտների հանձնարարել կատարել առաջադրանքները</p> <p>Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ</p> <p>Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր</p>	<p>1.Ի՞նչ է շրջանագիծը</p> <p>2.ինչ է հատվածը</p> <p>3.որ ուղիղներն են կոչվում զուգահեռ և փոխուղղահայաց ուղիղներ</p> <p>4.ինչպես կբաժանեք հատվածը հավասար մասերի</p> <p>5.ինչպես կբաժանեք շրջանագիծը հավասար մասերի</p> <p>6.զուգահեռ և փոխուղղահայաց ուղիղները ինչպես են կառուցվում</p> <p>7.ինչ կապ ունի գրաֆիկան մաթեմատիկայի հետ</p>	<p><i>Հարցադրումներ ի մեթոդ</i></p>
----------------------------	--	---	--	---

<p>7րուպե</p>	<p>է հավասար մասերի՝ քանոնից, գծագրական կարկինից և մատիտից</p> <p><i>Հարցերին հիմնականում պատասխանում են անվանակոչվածները, եթե պատասխանը թերի է լրացնում են մյուս աշակերտները</i></p>	<p>հետադարձ կապ հարցերի միջոցով:</p> <p>Թեման ամփոփել հարցերի միջոցով՝ ելնելով կատարված աշխատանքներից</p>	<p><i>1.ինչ տարբերություն կա շրջանագիծը 4 և 8 հավասար մասի բաժանելու միջև</i></p> <p><i>2.ինչ տարբերություն կա շրջանագիծը 3 և 6 հավասար մասերի միջև</i></p> <p><i>3.4հավասար մասի շրջանագծի բաժանման քանի դեպք կա</i></p> <p><i>4.հատվածը ինչպես ենք բաժանում 2 հավասար մասի</i></p>	<p><i>Հարցադրումներ ի մեթոդ</i></p>
<p>3րուպե 5րուպե-ավարտ</p>		<p>Գնահատում</p> <p>Տնային աշխատանքի հանձնարարում</p>		
<p>Տնային</p>	<p><i>Գծել գծագրական թղթի վրա, եթե գծագրական թուղթը շրջանակ և հիմնական</i></p>			

աշխատանք	<p><i>մակագրություն չունի պետքէ անպայման գծեք, լրացնեք, նոր կատարեք տնայինը.</i></p> <p><i>Շրջանագծի բաժանումը հավասար մասերի(3,4,6,8), հատվածի բաժանումը 2 հավասար մասի և գուգահեռ ուղիղներ գծել(ուղղահիգ, հորիզոնական և թեք)</i></p>
----------	--

ԴԱՍԱՊԼԱՆ-2

Ուսուցիչ՝ Սեդրակ Եղիազարյան

Առարկա՝	տեխնոլոգիա	Ամսաթիվ	19.09.2022	Կիսամյակ	I	Դասարան	V
Թեմա՝	Ուսումնասարտադրական գործընթացի կազմակերպումը						
Օգտագործվող նյութեր՝	<i>Քրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, արհեստանոցում օգտագործվող գործիքներ և հարմարանքներ</i>						
Դասի նպատակը՝	<p>Իմանալ-մարդու կյանքում փայտի, փայտատեսակների նշանակության մասին</p> <p>Իմանալ-արհեստանոցում օգտագործվող գործիքներին և կատարվող աշխատանքներին</p> <p>Իմանալ-փայտանյութի որակի որոշման մասին</p> <p>Ծանոթանալ-արհեստանոցում անվտանգության տեխնիկայի կանոններին</p> <p>Թվել-ծառերի տեսակները,</p> <p>Իմանալ-ծառի կազմությունը, ծառի բնի կառուցվածքը</p>						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						

<p>Վերջնարդյունքները</p>	<p>Աշակերտները կկարողանան.</p> <p>Քաղաքի ար ունենալ-հիմնական հատույթների մասին</p> <p>Իմանալ-փայտամշակման արհեստանոցում օգտագործվող դազգահների տեսակները</p> <p>Պահպանել-արհեստանոցում աշխատանքի անվտանգության կանոնները</p> <p>Իմանալ-փայտանյութի չորացման եղանակները</p> <p>Կարգաբերել-դազգահի բարձրությունը ըստ աշակերտի հասակի</p> <p>Տարբերել-սղոցանյութի տեսակները միմյանցից</p> <p>Կիրառել-ձեռք բերված գիտելիքները՝ պատրաստելով փայտե իրեր</p>			
<p>Գործողություններ(Ժամ/տևողություն)</p>	<p>Ուսումնական գործունեություն</p> <p><i>Աշակերտներ</i></p>	<p>Ուսումնական գործունեություն</p> <p><i>Ուսուցիչ</i></p>	<p>Հարցադրումներ</p>	<p>Կիրառվող մեթոդ (ներ)</p>

5րոպե-սկիզբ	<p>Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:</p> <p>Ներկայացնել տնային աշխատանքները</p>	<p>Ողջունել դասարանին, ն/բ:</p> <p>Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը</p>		
5րոպե-	<p>Աշակերտները հնչեցնում են տարբեր կարծիքներ փայտանյութի օգտագործման մասին, որոնք գրվում են գրատախտախին ուսուցչի կողմից, իսկ աշակերտները կատարում են նշումներ տետրերում</p>	<p>Կազմակերպել մտքերի տարափ „փայտանյութի օգտագործում,, արտահայտությամբ</p>		<i>Մտազրոհ մեթոդ</i>
25 րոպե-ընթացք	<p>Պատասխանել հարցերին, տալ փոխադարձ հարցեր, հնչեցնել իրենց համար անհասկանալի հարցերը, կատարել նշումներ տետրերում, տալ միմյանց հարցեր ստեղծելով ,, հավելյար,, գիտելիք, կազմակերպել քննարկում և վերլուծել</p>	<p>Նոր թեմայի հաղորդում՝ բաց և փակ հարցերի օգնությամբ՝ ապահովելով/ելով բոլոր աշակերտների ներգրավվածությունը ամբողջ դասաժամին</p> <p>Աշակերտներին բաժանել զույգերի, առաջադրելով գրել հարցեր, որը կտան</p>	<p><i>1.ինչ է աշխատատեղը և ինչպես է այն կահավորվում</i></p> <p><i>2.ինչպես է կարգաբերվում դազգահի բարձրությունը</i></p> <p><i>3.ինչ տեսակի ծառեր գիտեք</i></p>	<p><i>Հարցադրումների մեթոդ</i></p> <p><i>Զույգային աշխատանք</i></p>

	<p>միմյանց հարցերը</p>	<p>մյուս գույգերին</p> <p>Տրամադրվեց առաջ մղող բանավոր հետադարձ կապ և ուղղորդումներ</p> <p>Թեման ամփոփվեց 1</p>	<p><i>4.ինչ կազմություն ունի ծառը</i></p> <p><i>5.փայտանյութի չորացման ինչ եղանակներ գիտեք</i></p> <p><i>6. ինչպես են ստանում աղոցանյութերը</i></p> <p><i>7.ինչ աղոցանյութեր գիտեք</i></p> <p><i>8.ինչպես կպահպահեք աշխատանքի անվտանգության կանոնները մինչև աշխատելը, աշխատանքի ընթացքում և աշխատանքից հետո</i></p> <p><i>9.ըստ խտության քանի տեսակի են լինում փայտանյութերը</i></p> <p><i>10.ինչպես են որոշում փայտանյութի խոնավություն</i></p>	
--	------------------------	---	--	--

<p>5րոպե</p> <p>5րոպե</p>	<p>Չներգրավվող աշակերտները ուսուցչի պահանջով ասել մեկ կարճ նախադասություն կամ ասել մեկ նոր տերմին թեմայի վերաբերյալ</p>	<p>կարճ նախադասությամբ</p> <p>Տնային աշխատանքի հանձնարարում</p>		
<p>Տնային աշխատանք</p>	<p><i>Նկարել ծառ՝ ներկայացնելով ծառի կառուցվածքը</i></p>			